ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ (1920 թ. դեկտեմբեր - 1921 թ. փետրվար)

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ռ. Կ.

Խորհրդային Միության պատմությանն առնչվող պատմագիտական միտքը հիմնականում շարունակում է զարգանալ երկու ծայրահեղ դրսևորումներով: Առաջին՝ ժխտողական մոտեցմամբ այն բոլոր քաղաքական, ռազմական, տնտեսական, մշակութային գործընթացների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել ԽՍՀՄ-ի գոյության շրջանում, և երկրորդ՝ հիշյալ գործընթացները հիմնականում դրական գնահատելու և մատուցելու ձգտմամբ: Վերոհիշյալ դրսևորումներից բացի՝ առկա է նաև խորհրդային պետության պատմության անաչառ գնահատման միտումը: Անցյալի իրականությունը պահանջում է արձանագրել, որ ***ԽՍՀՄ-ի գոյության տարիներին ստեղծվել են արժեքներ, որոնց արարման փորձն ուսանելի է նաև այսօրվա և ապագայի համար:*** *Ուսանելի տարրեր առկա են եղել ԽՍՀՄ-ի հանրային կյանքի ամենատարբեր ոլորտներում: Մենք հատկապես կամենում ենք առանձնացնել մշակութային ասպարեզը:*

Այս շրջանում մշակույթի ստեղծագործական արվեստանոցի էական բնութագրիչն այն էր, որ մարդկային հարաբերություններում քարոզվում էր սերը, բարությունը, բարոյականությունը: Խնդիր էր դրվում հասարակության մեջ ձևավորել այն ըմբռնումը, ***որ սիրո հենքի վրա են հառնում բոլոր վեհ արժեքները:*** *Այո՛, այս ամենն առկա էր՝ անկախ խորհրդային մշակութային քաղաքականության տեսական հիմնավորումների ծիսական բնույթից: Ընդսմին հավելենք, որ բոլոր* ***հասարակարգերում էլ եղել է այս ձևականությունը կամ ծիսականությունը****: Եվ ոչ միայն մշակութային ասպարեզում: Այսօր էլ Արևմուտքի կողմից պարտադրվող ժողովրդավարական արժեհամակարգի գաղափարախոսությունը զերծ չէ ծիսականության դրսևորումներից, իսկ մշակութային քաղաքականության լիբերալիզմն ունի սահմաններ, որոնք չի կարելի հատել, այն դեպքում, երբ դա տանում է ազգային ինքնության աստիճանական վերացման, ազգային մշակութային ավանդական արժեքների երկրորդականացման:*

Խորհրդային մշակույթն ունեցել է զարգացման բարդ ու հակասական ընթացք: Նույն ուղին է անցել նաև խորհրդահայ մշակույթը: Բայց ինչպես նշել ենք մեկ այլ առիթով, զարգացման այդ բարդ ու հակասական ընթացքում ***«....գաղափարախոսական պարտադրանքի առկայությամբ հանդերձ՝ հնարավոր եղավ ազգային առանձնահատկությունների ներառումով***

խորհրդահայ մշակույթի զարգացումը, որի տարբեր ուղղությունների ձեռքբերումները հայ ազգի մեծ նվաճումներն են»[1]:

Խորհրդահայ մշակույթի ձևավորման առաջին քայլերն սկսվել են Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո:

Հայհեղկոմը դեռ մինչև Փետրվարյան իրադարձությունները Հայաստանի ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև մշակութային կյանքում փորձում էր որոշակի ուղղորդված քաղաքականություն իրականացնել: Սակայն այն մասամբ է կյանքի կոչվում՝ պայմանավորված Փետրվարյան իրադարձությունների հետևանքով Հայաստանի անկախության կարճատև վերականգնմամբ. արդյունքում մնում են միայն հրամաններն ու դեկրետները, որոնց իրականացումն առնչվում է Ալ. Մյասնիկյանի կառավարման շրջանին:

Ազգային մշակույթի, մասնավորապես կրթական համակարգի ձևավորման և զարգացման գլխավոր նախապայմանը ազգային լեզվի գործառության պետական կարգավիճակն է: Եվ պատահական չէր, որ Հեղկոմի առաջին դեկրետներից մեկը վերաբերում էր պետական լեզվին: Խորհրդահայ պատմագրության մեջ միշտ շեշտվել է, որ 1920 թ. դեկտեմբերի 9-ի դեկրետով հանրապետության սահմաններում պետական լեզու ճանաչվեց հայերենը[2]*: Սակայն իրականում այն ունեցել է հետևյալ բովանդակությունը. «Հանրապետութեան սահմաններում պետական լեզուն ճանաչել հայերէնը, իսկ մուսուլմանաբնակ վայրերում հայերէնին կից նաև թուրքերէնը»*[3]*:*

Այսպիսով, Հայաստանի թուրքաբնակ վայրերում պետական լեզու էր ճանաչվում նաև թուրքերենը: Սա անտրամաբանական ձևակերպում էր, քանի որ խոսքը հանրապետության տարածքում պետական լեզվի մասին էր: Այդ պետությունը Հայաստանի Խորհրդային Հանրապետությունն էր, որտեղ պետական լեզու էր հռչակվում նաև թուրքերենը, տվյալ դեպքում՝ ազերիների թուրքերենը, որոնք ունեին իրենց հանրապետությունը: Նման ձևակերպումը պետք է բացատրել բոլշևիկյան ազգային քաղաքականությամբ, որի հիմքում նրանց պատկերացումներն էին աշխատավոր ազգերի հավասարության և ժողովուրդների բարեկամության մասին:

1920 թ. դեկտեմբերի 17-ին Հեղկոմի նախագահ Սարգիս Կասյանի և լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի ստորագրությամբ ընդունվում է «Հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկությունների պետականացման մասին» դեկրետը, որով «ՀՍԽՀ գտնված բոլոր ազգութեանց հոգևոր հաստատութիւններին պատկանող կուլտուր-

---

[1] *Տե՛ս* **Միրզախանյան Ռ.,** *Խորհրդահայ մշակույթը 1956-1990 թթ., Ե., 2009, էջ 26:*

[2] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Ե., 1967, էջ 424 (այստեղ որպես դեկրետի հրատարակման տարեթիվ սխալմամբ նշվում է 1920 թ. դեկտեմբերի 6-ը):* **Ղարիբջանյան Լ. Պ.,** *Երևանի պետական համալսարան, 60-ամյակը, Ե., 1985, էջ 22: Հայոց պատմություն, դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, խմբ.՝ պրոֆ.* **Հր. Ռ. Սիմոնյանի,** *Ե., 2012, էջ 619 և այլն:*

[3] *ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 1, 1920 թ. նոյեմբերի 29-1921 թ. փետրվարի 18, Էջմիածին, 1921, էջ 7:*

կրթական հիմնարկությունները (դպրոցները, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարաններն ու տպարանները) իրենց ամբողջ շարժական և անշարժ գոյքով համարում են պետական սեպականություն և փոխանցում են Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարիատի տնօրինութեան»[4]:

Հիշյալ, ինչպես նաև հետագա դեկրետները Խորհրդային Ռուսաստանում ընդունված փաստաթղթերի կրկնություններն էին: ***Մշակութային քաղաքականությանը վերաբերող այդ կրկնություններն ընկալելի էին, սակայն, սոցիալ-տնտեսական ոլորտում, իսկ Ռուսաստանի որդեգրած ռազմական կոմունիզմի քաղաքականության ընդօրինակումը հանգեցրեց ապստամբության: Փաստորեն, այդ դեկրետները գործնական նշանակություն չունեցան և մնացին միայն որպես նորմատիվային ակտեր:***

Սույն դեկրետին նույն օրը հետևում է լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանի հրամանը, որով «Հանրապետության մեջ գտնուած հոգևոր հաստատութիւններին պատկանող բոլոր կուլտուր-կրթական հիմնարկները և նրանց ամբողջ գոյքը ենթարկւում են պետականացման....»: Դրա իրականացման գործընթացը դրվում էր հեղկոմների լուսավորության բաժանմունքների վրա, որոնք այնուհետև այդ հիմնարկներն իրենց գույքով պետք է գործադրվեին «....բանւորա-գիւղացիական մասսաների կրթական կարիքների համար»[5]:

Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին կրթական գործունեություն կարող էին ծավալել նաև մասնավոր անձինք կամ առանձին հաստատություններ: Դրա վկայությունն է Սիմոն Վրացյանի այն գրությունը, ըստ որի 1918 թ. սեպտեմբերի 11-ին Հայաստանի խորհուրդը «....հաստատեց դպրոցական օրէնքը, որով «իւրաքանչիւր հասարակական կամ համայնական կազմակերպու-թիւն, խմբակցութիւն, ընկերակցութիւն, ***ինչպէս եւ առանձին անհատ, իրաւունք ունէին անարգել դպրոց բանալու եւ անկախօրէն վարելու սեփական միջոցներով****: Պետութեան վերապահւում էր ընդհանուր հակակշիռը»[6] (ընդգծումը մերն է - Ռ. Մ.):*

Հայհեղկոմը Խորհրդային Ռուսաստանի օրինակով լուսավորու-թյան կամ կրթական գործի կազմակերպումը համարում էր պետության մենաշնորհը՝ այդ, ինչպես և մնացյալ այլ ոլորտներում բացառելով մասնավոր սեփականությունը, և կրթության հնարավորություն էր ընձեռում բոլոր խավերին, իսկ ՀՀ-ի գոյության տարիներին էլ չէր արգելվում մասնավոր գործունեությունն այս ոլորտում. պարզապես պետությունը պետք է պահպաներ հակակշիռը մասնավոր և պետական կրթական հիմնարկների

---

[4] *Նույն տեղում, էջ 16:*

[5] *Նույն տեղում, նաև՝ Հայկական ՍՍՌ օրենքների Գերագույն սովետի նախագահության հրամանագրերի և Հայկական ՍՍՌ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու, 1920 թ. նոյեմբերի 29–1938 թ. դեկտեմբերի 31 (առ 1-ը հուլիսի 1963 թ. փոփոխություններով և լրացումներով), Ե., 1963, էջ 46-47:*

[6] **Վրացեան Ս.,** *Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958, էջ 193:*

միջև: Այս դեպքում ևս կրթության իրավունք ունեին բոլորը, բայց մասնավոր կրթական հաստատությունները չէին կարող լինել բոլորի համար մատչելի: **Ահա սրանում էր հիմնական տարբերությունը այս օրենքի և Հայհեղկոմի դեկրետի միջև, որով, փաստորեն, դրվում էր անվճար կրթական համակարգի ձևավորման իրավական հիմքը:**

Դեկրետին հետևած հրամանի ծանոթագրությունից տեղեկանում ենք, որ պետականացվում էին Էջմիածնի ճեմարանը, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարանն ու տպարանը, որոնք դառնում էին «Հայաստանի աշխատավոր ժողովրդի սեփականություն»: Մեր կարծիքով, այս բնորոշումն ուներ որոշակի ծիսական բնույթ, քանի որ ակնհայտ էր, որ իրականության մեջ պետական սեփականությունը և ժողովրդի սեփականությունը միանգամայն տարբեր բովանդակություն ունեին: **Իրականում դպրոցների կամ լուսավորության այլ օջախների՝ ժողովրդական սեփականություն հռչակելու բոլշևիկյան կարգախոսը տանում էր դեպի մասնավոր սեփականության իրավունքի վերացում և պետական սեփականության ամրապնդում, հանգամանք, որն ուղիղ համեմատական չէր այդ օջախների ժողովրդական սեփականություն հանդիսանալու փաստին: Եթե կրթությունն անվճար էր դառնալու, ապա դա չէր նշանակում, որ կրթության օբյեկտը ժողովրդինն էր, և եթե տվյալ լուսավորական օբյեկտը նախկինում պատկանում էր եկեղեցուն, ապա դա չէր ենթադրում, որ այնտեղ ժողովրդի ներկայացուցիչների այցն արգելված էր, կամ Էջմիածնի ճեմարանում կրթությունը մասնավոր էր:**

Ուրեմն **դրվատելին այն էր, որ կրթությունը մատչելի էր դառնում բոլորի համար, իսկ եկեղեցուն պատկանող լուսավորական հիմնարկների պետականացումը պայմանավորված էր բոլշևիկյան աթեիստական գաղափարախոսության՝ եկեղեցու նկատմամբ որդեգրած առանձնահատուկ դիրքորոշմամբ: Դա ենթադրում էր վերջինիս մեկուսացում պետական և մշակութային-լուսավորական գործերից, եկեղեցու անջատում պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց:**

Հիշյալ դեկրետին և հրամանին նույն դեկտեմբերի 17-ին հետևում է լուսժողկոմի մեկ այլ հրաման՝ «Կուլտուր-կրթական գործերի վերակազմութեան մասին», որով վերացվում էին զեմստվային ու քաղաքային կրթական բաժինները, և նրանց գույքն անցնում էր տեղական հեղկոմների համապատասխան բաժանմունքներին: Հրամանի երկրորդ կետով մշակութային-լուսավորական բոլոր մասնավոր հաստատությունները՝ դպրոցները, մանկապարտեզները, գրադարանները, ակումբները և այլն, պետք է գրանցվեին հեղկոմների լուսավորության բաժանմունքներում: Հատկանշական է հրամանի երրորդ կետը. «Տեղական Յեղկոմների վրա պարտականութիւն է դրուում անյապաղ լիկվիդացիայի ենթարկել բոլոր այն կրթական հաստատութիւնները, միութիւններն ու ձեռնարկութիւնները, որ

հե-տապնդում են ազգայնական, կղերական և առհասարակ հակայեղա-փոխական նպատակներ»[7]:

Վերոհիշյալ ձևակերպումը պարարտ հող էր ստեղծում ծայրահեղական գործողությունների ծավալման համար. հետապնդման ենթարկվեցին ազգային նշանակության ինստիտուտներ, մասնավորապես Հայ առաքելական եկեղեցու համակարգում գործող հաստատությունները:

Կրթամշակութային ոլորտին առնչվող Հայհեղկոմի առաջին դեկրետներն արձանագրեցին դրական արդյունքներ. Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրերից դրանք միտված են եղել դպրոցների աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը: Ի դեպ, նկատենք, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Հայաստանի բնակչության մեծամասնությունն անգրագետ էր:

Այսպես, ռազմական ժողկոմ Ավիս Նուրիջանյանի 1920 թ. դեկտեմբերի 16-ի հրամանով ուսուցիչները, միջնակարգ դպրոցների մինչև 22 տարեկան աշակերտները և բարձրագույն դպրոցների մինչև 27 տարեկան ուսանողներն ազատվում էին զինվորական ծառայությունից[8]:

Հրամանի նպատակը պարզ էր՝ նպաստել կրթական գործի արդյունավետ կազմակերպմանը: Չէր բացառվում նաև, որ իր կառավարման դատապարտելի մեթոդներով հայտնի Ավիսը, սույն հրամանով ուսուցիչներին, աշակերտներին և ուսանողներին ազատելով զինվորական ծառայությունից, միտում է ունեցել կողմնորոշելու նրանց դեպի խորհրդային իշխանություն: Բայց որ վերջինս իսկապես հակված էր դպրոցական պարապմունքներն արագ վերսկսելու, երևում է այս հրամանին հաջորդած լուսժողկոմի մեկ այլ հրամանից (դեկտեմբերի 18-ի)՝ «Դպրոցական կանոնաւոր պարապմունքները վերսկսելու մասին», որտեղ, մասնավորապես, նշվում է.

«1. Որովհետև համաձայն Ռազմժողկոմի ս. թ. դեկտ. 16-ին N 22 Հրամանի զօրաժողովի ենթարկւած ուսուցիչներն ու աշակերտներն արձակւում են զօրամասերից բանակի պահեստ, առաջարկում եմ դպրոցների վարչական մարմիններին միջոցներ ձեռք առնել անյապաղ դպրոցական կանոնաւոր պարապմունքները վերսկսելու համար»[9]:

Համաձայնվենք, որ դյուրին չէր այս հրամաններն արագորեն կյանքի կոչելը, քանի որ՝ ***ա) դեռևս բացակայում էր դպրոցների կրթական նոր հայեցակարգը, բ) ուսուցիչներից շատերը չէին ընդունում բոլշևիկյան գաղափարախոսությունը, գ) Հայհեղկոմի վարած տնտեսական ոչ ճիշտ քաղաքականությունը, աճող բռնաճնշումները չէին կարող բացասական անդրադարձ չունենալ կրթական գործի կազմակերպման վրա:***

---

[7] *ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 1, էջ 17:*

[8] *Նույն տեղում, էջ 14:*

[9] *Նույն տեղում, էջ 20:*

Այնուամենայնիվ, նորաստեղծ իշխանության՝ անվճար կրթական համակարգ ստեղծելու ջանքերն ինքնին դրական կարելի էր գնահատել, թեկուզ և դրանք դրսևորվում էին իրավական ակտերի ձևով:

Սույն իրավական ակտերում կարևորագույններից է «Երեւանի Համալսարանի վերակազմութեան մասին» լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանի 1920 թ. դեկտեմբերի 17-ի հրամանը: Մինչ այդ ավելորդ չենք համարում մատնանշել, որ խորհրդահայ պատմագրության մեջ սույն հրամանը որակվում էր ոչ թե համալսարանի վերակազմություն, այլ հիմնադրում: Այսպես, Լ. Ղարիբջանյանի հեղինակած գրքում կարդում ենք. «Ժողովրդական տնտեսության վերականգնման ու հետագա զարգացման, ինչպես և ժողովրդական կրթության բարգավաճման համար անհրաժեշտ էին բարձրորակ մասնագետներ, որոնք կարող էին պատրաստվել միայն բարձրագույն ուսումնական հաստատությունում: Ահա թե ինչու Հայաստանի կառավարության ձեռնարկած կուլտուրական հիմնական միջոցառումների շարքում իր նշանակությամբ իսկապես բացառիկ էր ***Երևանի ժողովրդական համալսարանի հիմնադրումը****, որն իրագործվեց Հեղկոմի որոշմամբ 1920 թ. դեկտեմբերին՝ սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո»[10] (ընդգծումը մերն է - Ռ. Մ.): Այս նույն տեսակետն է ներկայացվում նաև այլ աշխատություններում[11]:*

Հայաստանում համալսարան հիմնելու որոշումն ընդունվել է 1919 թ. մայիսի 16-ին, հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1920 թ. հունվարի 31-ին Գյումրիում՝ երկու՝ պատմության և լեզվագրության ֆակուլտետներով, իսկ 1920 թ. հունիսին այն փոխադրվել է Երևան: ***Փաստացի վերակազմված համալսարանը նախորդի իրավահաջորդն էր:***

Վերոհիշյալ հրամանի առաջին կետով՝ ա) Երևանի համալսարանը վերանվանվում էր «....Երևանի ժողովրդական համալսարան»[12], բ) հիշատակված նախկին երկու ֆակուլտետների փոխարեն ստեղծվում էին երկու բաժանմունքներ՝ բնագիտական և հասարակագիտական, գ) նախկին պրոֆեսորա-դասախոսական կազմն ազատ էր արձակվում, դ) նախկին համալսարանի գույքի պահպանությունը թողնվում էր հին վարչության վրա մինչև նրա լիակատար վերակազմավորումը, ե) լուսժողկոմատին կից կազմակերպվում էր համալսարանի վերակազմավորման հանձնաժողով, որը մեկ շաբաթվա ընթացքում պետք է ներկայացներ «....նոր համալսարանի կազմակերպութեան հիմունքները, ծրագիրը, դասախոսների կազմը ու

---

[10] *Տե՛ս* **Ղարիբջանյան Լ. Պ.,** *Երևանի պետական համալսարանը (1920-1930 թթ.), Ե., 1965, էջ 23:*

[11] *Հմմտ.* **Էլչիբեկյան Հ., Հակոբյան Ա.,** *Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պր. 1, Ե., 1954, էջ 222-223; Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Ե., 1967, էջ 441-442 և այլն:*

[12] *Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 1, էջ 18:*

շտատները»[13]*:* Փաստորեն, փոխվում էին համալսարանի անվանումը, դասախոսները, կառուցվածքը և կանոնադրությունը:

Համալսարանի վերակազմության հանձնաժողովն ուներ հետևյալ կազմը՝ Երվանդ Կողբեցյանց (նախագահ), Գրիգոր Չուբարյան, Գագիկ Պիճիկյան, Եղիա Չուբար և Վահան Շահգելդյան (վերջին երկուսը՝ ուսանողների կազմից)[14]: Այս հանձնաժողովը դեկտեմբերի վերջերին ավարտում է աշխատանքները՝ ներկայացնելով համալսարանի կազմակերպման նոր հիմունքները, որոնք, բնականաբար, բխում էին Խորհրդային Ռուսաստանում բարձրագույն դպրոց կառուցելու բոլշևիկյան հայեցակարգերից: Դեկտեմբերի 28-ին հրապարակվում են լուսժողկոմի երկու հրամանները՝ «Երեւանի ժողովրդական համալսարանի կազմակերպության մասին» և «Երեւանի ժողովրդական համալսարանի ժամանակավոր կանոնադրության մասին»[15]:

Առաջին հրամանով նախատեսվում էր ստեղծել համալսարանը կառավարող խորհուրդ, որը պետք է մշակեր նրա ներքին կանոնադրությունը: Հաստատվում էին հետևյալ հաստիքները՝ 20 պրոֆեսոր, 30 դասատու, լեզուների 7 դասախոս, 10 գրասենյակային և տեխնիկական պաշտոնյաներ: Հասարակագիտական ֆակուլտետում աշխատանքի անցան «....Աբեղեան Մ., Աղբալեան Ն., Տէրտէրեան Ա., Ղափանցեան Գր., Աբրահամեան Ռ., Լիսիցեան Լ., Մանանդեան Յ., Մելիք-Ալլահվերդեան Գ., Պիճիկեան Գ., Տիգրանեան Ս., Էդի- լեան Գ., Թորամանեան Թ., Չուբարեան Գ. և Խոնդկարեան Ա.»[16]: Փաստորեն, դասախոսների թվում էին դաշնակցական նշանավոր գործիչներ Ն. Աղբալյանը և Ս. Տիգրանյանը, ՀՀ խորհրդարանի անդամ, սոցիալիստ-հեղափոխական Ա. Խոնդկարյանը: Եվ այս ամենը այն պայմաններում, երբ Հայհեղկոմի ձախ թևը Ավիս Նուրիջանյանի գլխավորությամբ սկսել էր բռնաճնշումները այլախոհ քաղաքական գործիչների նկատմամբ: Կարծում ենք, այս անձանց ներգրավումը պայմանավորված էր Աշոտ Հովհաննիսյանի և Սարգիս Կասյանի ըմբռնումներով: Հետագայում, ցավոք, հաղթեց Ավիսի տեսակետը, և ձերբակալվեց նաև Ա. Հովհաննիսյանը:

Համալսարանի ժամանակավոր կանոնադրության մասին հրա-մանի առաջին կետում նշվում է. «Երեւանի ժողովրդական համալսարանը բանւորա-գիւղացիական ազատ դպրոց է, որ մասսաների սեփականութիւն է դարձնում բնական և սոցիալական գիտութիւններն ու նրանց ուսումնասիրութեան մեթոդները, նպաստելով կեանքի գիտակցական վերաշինութեանը կոմունիստական աշխարհահայեացքի հիմունքներով»[17]: Խորհրդային ղեկավարությունը կարծում էր, որ բարձրագույն դպրոցն է հանդիսանալու կոմունիստական աշխարհայացքի ընդհանրացման դարբնոցը: Այս նպատակին հասնելու համար համալսարանը պետք է

---

[13] Նույն տեղում:

[14] Նույն տեղում, նաև՝ **Ղարիբջանյան Լ. Պ.,** նշվ. աշխ., էջ 24:

[15] Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 1, էջ 34-39:

[16] Նույն տեղում, էջ 34:

[17] Նույն տեղում, էջ 35:

կազմակերպեր դասընթացներ և դասախոսություններ, գործնական և այլ պարապմունքներ, հրատարակեր աշխատություններ և այլն: Ուշագրավ է, որ համալսարանի պարապմունքները հիմնականում պետք է ընթանային երեկոյան, իսկ ընդունելությունն առանց քննությունների էր. առաջնահերթությունը տրվում էր բանվորներին ու գյուղացիներին, իսկ ուսուցումն անվճար էր: Համալսարանի բարձրագույն օրգանը խորհուրդն էր, որտեղ ընդգրկված էին «....ֆակուլտետների երկու վարիչները, երեք ներկայացուցիչ դասախոսներից, հինգ ունկնդիրներից և հինգ ներկայացուցիչ մի միական ժողովրդական լուսաւորութեան Կոմիսարիատից, արհեստակցական միութիւններից, խորհրդային կուլտուրական կրթական կազմակերպութիւններից, Պրոլետ. կուլտից և Կոմունիստական կուսակցութիւնից»[18]: Համալսարանի խորհուրդն ընտրում էր վարիչին (ռեկտորին):

*Խորհրդի առաջին նիստը հրավիրվում է 1921 թ. հունվարի սկզբին, որը փակ-գաղտնի քվեարկությամբ վարիչ է ընտրում (ռեկտոր սկսել են կոչել 1922 թ. հունվարից) Հակոբ Մանանդյանին: Երևանի համալսարանի պաշտոնական բացումը տեղի է ունենում 1921 թ. հունվարի 23-ին Ստեփան Շահումյանի անվան բանվորական ակումբի դահլիճում[19]: Բացման խոսքով հանդես է գալիս Հակոբ Մանանդյանը, ելույթներ են ունենում Աշոտ Հովհաննիսյանը, Հայաստանի կենտկոմի անունից՝ Վ. Երեմյանը, արհեստակցական միությունների կողմից՝ Հ. Ազատյանը, Կարմիր բանակի կողմից՝ Ա. Լալայանը: Եզրափակիչ խոսքը դարձյալ Հ. Մանանդյանինն էր, որից հետո Գ. Չուբարյանը կարդում է դասախոսություն՝ «Խորհրդային իրավունքը և Հայաստանի ժողովրդական համալսարանը» թեմայով: Պարապմունքներն սկսվում են հաջորդ օրվանից՝հունվարի 24-ից, Աբովյան փողոցի վրա գտնվող ուսուցչական սեմինարիայի շենքում, բայց համալսարանի գործունեությունը երկար չի տևում վրա հասած Փետրվարյան իրադարձությունների պատճառով: Փաստենք, որ **Երևանի համալսարանը համապատասխանում էր իր անվանմանը՝ «ժողովրդական», քանզի ղեկավարության կազմն ընտրովի էր, իսկ ժողովրդական ամենալայն զանգվածների համար ազատ մուտք էր ապահովված:** Խորհրդային շրջանում Հակոբ Մանանդյանը համալսարանի միակ ընտրված ռեկտորն էր: Հետագայում ռեկտորները նշանակվում էին լուսժողկոմատի կողմից, ապա՝ բարձրագույն կրթության կոմիտեի, այնուհետև՝ նախարարության:*

Հայհեղկոմի կառավարման շրջանում մշակութային-կրթական ոլորտին առնչվող մի քանի որոշումներ էլ են եղել, որոնք, չնայած իրենց ձևակերպման ժողովրդավարական բնույթին, հակադարձ համեմատական էին այն

---

[18] *Նույն տեղում, էջ 37, նաև՝ Հայկական ՍՍՌ օրենքների Գերագույն սովետի նախագահության հրամանագրերի և Հայկական ՍՍՌ օրենքների, Գերագույն սովետի նախագահության հրամանագրերի և Հայկական ՍՍՌ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու, 1920 թ. նոյեմբերի 29 – 1938 թ. դեկտեմբերի 31 (առ 1-ը հուլիսի 1963 թ., փոփոխություններով և լրացումներով), էջ 28:*

[19] *Կոմունիստ, 26.01. 1921:*

քաղաքականությանը, որը ժողովրդական զանգվածների նկատմամբ իրականացնում էին մասնավորապես Ավիսն ու չեկայի ղեկավար Գևորգ Աթարբեկյանը՝ խախտելով դեկտեմբերի 2-ի համաձայնագրի կետերը:

Բավական ուշագրավ է լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանի դեկտեմբերի 28-ի հրամանը՝ «Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատին կից ժողովրդական լուսաւորութեան կոլեգիա հիմնելու մասին», «....որ գործելու է որպէս խորհրդակցական օրգան Լուսաւորութեան ժողովրդական Կոմիսարի նախագահութեամբ: Կոլեգիայի անդամ են նշանակւում ընկ. ընկ. Դուրգարեան, Քեչեկեզեան, Յովսեփեան, Աւետեան և Չարենց»[20]:

Հայտնի մտավորականներին, որոնց թվում նաև Եղիշե Չարենցին լուսժողկոմին կից խորհրդակցական մարմնում ընդգրկելը վկայում էր այն մասին, որ այդ մարմինը մշակութային-կրթական և գիտական-գեղարվեստական կյանքի բարեփոխման լուրջ նպատակներ էր հետապնդում:

Լուսժողկոմի՝ դեկտեմբերի 31-ի երկու հրամաններից մեկով արգելվում էր դպրոցներում կրոնական առարկաների դասավանդումը և ծես կատարելը, իսկ մյուսով՝ դպրոցներում և այլ մշակութային հաստատություններում հոգևորականների պաշտոնավարումը. նրանք կարող էին պաշտոնավարել, եթե հրաժարվեին հոգևորական դասից և հատուկ թույլտվություն ստանային լուսժողկոմից[21]:

Հեղկոմի ընդունած դեկրետների հիման վրա լուսժողկոմատը փորձում է որոշ միջոցառումներ իրականացնել նաև մշակութային այլ ոլորտների զարգացման ուղղությամբ: Երևանում 1921 թ. դեկտեմբերին հիմնադրվում է Խորհրդային Հայաստանում առաջին երաժշտական հաստատությունը՝ երաժշտական ստուդիան, որի հիման վրա հետագայում բացվեց հանրապետության երկրորդ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Երևանի պետական կոնսերվատորիան[22]:

Իրականացվում են միջոցառումներ՝ ուղղված խորհրդահայ թատրոնի ձևավորմանը: 1920 թ. դեկտեմբերի 3-ին Երևանում տեղի է ունենում արվեստի աշխատողների առաջին ժողովը, որի որոշմամբ ստեղծվում է «Գեղաշխ» միությունը՝ իրեն առընթեր թատերական բաժնով. ղեկավար է նշանակվում Վարդան Միրզոյանը: Դեկտեմբերի 18-ին Երևանում մի խումբ թատերական գործիչներ նախկին Առնտրային ժողովարանի հանդիսասրահը, որը բեմ ուներ, փաստորեն, վերածեցին թատերական ներկայացումների սրահի: Թատերական ներկայացումների համար սկսեցին օգտագործել նաև բեմական կահավորմամբ հագեցած Ջանփոլադյանների թատրոնը: «Գեղաշխի» թատերական բաժնին կից կազմակերպվեց երաժշտադրամատիկական խումբ: Խմբում ընդգրկվեցին Շարա Տալյանը, Մկրտիչ Գարագաշը, Գուրգեն Ջանիբեկյանը, Օրի Բունիաթյանը: Այս խումբը 1920 թ. դեկտեմբերի 23-ին

---

[20] *ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 1, էջ 34-35:*

[21] *Նույն տեղում, էջ 43 և 44:*

[22] **Էլչիբեկյան Հ., Հակոբյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 224 -225:*

Երևանում բեմադրեց «Պեպոն», իսկ այնուհետև Շիրվանզադեի «Պատվի համարը», Վրթ. Փափազյանի «Ժայռը», Հ. Աբելյանի «Մարվող ճրագները» և այլն: Հեղկոմի կոչով հանրապետությունով մեկ ստեղծվեցին թատերախմբեր: Դիլիջանում այն ղեկավարում էր Հասմիկը, Ղարաքիլիսայում՝ Ամո Խարազյանը և Անուշավան Վարդանյանը[23]:

Որոշակի քայլեր են ձեռնարկվում խորհրդահայ կերպարվեստի զարգացման ուղղությամբ: Լուսժողկոմատը փորձում է հավաքել Հայաստանի տարածքում գտնվող արժեքավոր գործերը, որի իրականացման համար 1921 թ. հունվարի 8-ի լուսժողկոմի հրամանով հիմնվում է «....հնութեանց և Գեղարուեստից Պահպանման Յանձնաժողով»[24]: Հիշյալ հանձնաժողովին «....և նրա ցուցմունքներով՝ Ժողովրդական Լուսաւորութեան գաւառական բաժիններին» հանձնարարվում է «....Կատարել առաջին պետական ցուցակագրութիւնը գեղարուեստական և հնագիտական արժէք ունեցող բոլոր յուշարձանների և առարկաների՝ ինչպէս ամբողջական հաւաքածուների, նոյնպէս էլ առանձին իրերի, ում էլ նրանք պատկանելիս լինեն»[25]:

Ավելին. հրամանով նախատեսվում էր բռնագրավել արվեստի բոլոր հուշարձանները, որպեսզի դրանք ծառայեցվեին «ժողովրդական մասսաների կրթական պահանջներին»:

*Այս հրամանով բռնագրավում էին արվեստի գործեր, որոնցից շատերն անձնական սեփականություն էին: Մյուս կողմից, այս հրամանն ուներ դրական դրսևորում այն իմաստով, որ գեղարվեստական ու հնագիտական արժեք ներկայացնող հուշարձանների ու առարկաների պահպանման համար ստեղծվում էին անհրաժեշտ պայմաններ, քանի որ վերջիններս անցնում էին լուսժողկոմի տնօրինությանը: Այդ մասին վկայում է հրամանի 5-րդ կետը. «Հաշուի առնուած յուշարձանները, հաւաքածուները և առանձին առարկաները կարող են գրաւել կամ դրել Հնութիւնների և Գեղարուեստական իրերի պետական պահպանման վերոյիշեալ հիմնարկութիւնների իրաւասութեան ներքոյ, **եթէ նրանց ամբողջութեան պահպանման վտանգ սպառնայ տէրերի անփոյթ վերաբերմունքից կամ եթէ տէրերը հնարաւորութիւն չունեն պահպանման հատուկ միջոցներ ձեռք առնել**»[26] (ընդգծումը մերն է - Ռ. Մ.): Ավելի ուշ՝ 1921 թ. հոկտեմբերին, այս հանձնաժողովում ընդգրկվում է Նոր Նախիջևանից ժամանած Մարտիրոս Սարյանը: 1923 թ. դեկտեմբերին այն վերակազմավորվում է Հուշարձանների և արվեստի պահպանության կոմիտեի, որի նախագահ է նշանակվում Ալեքսանդր Թամանյանը: Մյուս ան-*

---

[23] **Հարությունյան Բ.,** *Հայ սովետական թատրոնը, 1917-1977, Ե., 1985, էջ 12-14:*

[24] *ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 1, էջ 57-59, նաև՝ Հայկական ՍՍՌ օրենքների, Գերագույն սովետի նախագահության հրամանագրերի և Հայկական ՍՍՌ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու, էջ 36-38:*

[25] *Նույն տեղում, էջ 57 և էջ 37:*

[26] *Նույն տեղում, էջ 58 և էջ 37:*

դամներն էին Մ. Սարյանը, Ա. Քալանթարը, Ս. Տեր-Հակոբյանը և Թ. Թորամանյանը[27]:

1920 թ. դեկտեմբերի 16-ին կազմավորվում է Հայաստանի արվեստի աշխատողների միությունը (РАБИС): Այն ուներ նկարիչների սեկցիա, որն ստեղծվում է դեկտեմբերի 25-ին: Իսկ Ալեքսանդրապոլում մանկավարժ և նկարիչ Գևորգ Բրուտյանի ղեկավարությամբ ստեղծվում է տեղի նկարիչների ընկերակցությունը (ասոցիացիան): Միաժամանակ Հայաստանի քաղաքներում ձևավորվում են լուսժողկոմատի նկարչության բաժիններ[28]:

Հեղկոմը նաև իրականացնում էր հոգևոր հաստատությունների և մշակութային-լուսավորական հիմնարկների պետականացման և թանգարանային գործի կազմակերպման աշխատանքներ: Այս առումով կարևորվում է Հեղկոմի նախագահ Ս. Կասյանի և լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանի՝ 1921թ. փետրվարի 5-ի «Էջմիածնի գույքերի մի մասը Լուսժողկոմին յանձնելու մասին» դեկրետը, որով վերջինիս իրավասության տակ էին դրվում Հռիփսիմեի վանքը, Զվարթնոցի ավերակները՝ հարակից շինություններով և գույքով, Էջմիածնի նոր Վեհարանը, հյուրանոցը և հանրակացարանը՝ իրենց ողջ գույքով: Դեկրետի 3-րդ կետով «Յանձնարարվում է Լուս. Ժող. Կոմիսարիատին վերակազմել Էջմիածնի կուլտուր-կրթական հաստատությունների պետականացրած ցանցը (մատենադարան, թանգարան, տպարան և այլն) և հիմնել Էջմիածնում Կուլտուր-Պատմական Ինստիտուտ»[29], որի նպատակն էր՝ ա) գիտական հիմքերի վրա դնել հայկական մշակույթի ուսումնասիրության գործը, բ) զանգվածների սեփականությունը դարձնել բոլոր այն ձեռագիր հուշարձանները, որոնք ունեին գիտական-գեղարվեստական արժեք և կարող էին աղբյուր հանդիսանալ նոր մշակութային արժեքների ստեղծման համար:

Եվ, վերջապես, հավելենք, որ ՀՀ-ի խորհրդայնացումից շատ չանցած՝ փակվում են երկրում լույս տեսնող բոլոր թերթերը, պետականացվում են տպարանները, իսկ դեկտեմբերից լույս է տեսնում Հեղկոմի և ՀԿԿ ԿԿ օրգան «Կոմունիստ» թերթը, որով սկզբնավորվում է բոլշևիկյան գաղափարախոսությամբ առաջնորդվող մամուլը:

Որպես ասվածի ամփոփում՝ հարկ ենք համարում առանձնացնել հետևյալ հիմնական եզրակացությունները.

առաջին. 1920 թ. դեկտեմբերից 1921թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում լուսժողկոմատն ընդունում է մի շարք դեկրետներ և հրամաններ, որոնք միտված էին խորհրդայնացված Հայաստանում նոր մշակութային կյանքի ձևավորմանը,

երկրորդ. իրականացված միջոցառումները բխում էին Խորհրդային Ռուսաստանում վարվող մշակութային քաղաքականությունից և վերջինիս «ժողովրդականացման» բոլշևիկյան դրույթներից,

երրորդ. իրականացվող քաղաքականությունը միտված էր մշակութային առանձին ճյուղերի նկատմամբ պետական հովանավորության խթանմանը,

չորրորդ. հրապարակված դեկրետները և հրամանները նորմատիվային ակտեր էին, որոնց իրագործումը դյուրին չէր. այն պահանջում էր ժամանակ և տեսական հիմնավորում,

հինգերորդ. Հայհեղկոմի առավել ձախ թևի ներկայացուցիչների որդեգրած տնտեսական և սոցիալական քաղաքականությունն արգելք հանդիսացավ

---

[27] **Авакян А.** *Из истории художественной жизни Армении, Е., 2002, с. 11.*

[28] *Նույն տեղում, էջ 12:*

[29] *Տե՛ս ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 1, էջ 107 -108:*

մշակութային քաղաքականության ձևավորման համար, քանի որ Փետրվարյան իրադարձությունների հետևանքով Հայաստանի բազմաթիվ շրջաններում միաժամանակ տապալվեցին խորհրդային կարգերը:

Խորհրդահայ մշակութային կյանքը զարգացման նոր ընթացք ունեցավ 1921 թ. մայիսից, երբ Հայաստանում ղեկավար աշխատանքի կոչվեց Ալեքսանդր Մյասնիկյանը, որի օրոք մշակութային քաղաքականության իրականացումը մեկ այլ ուսումնասիրության թեմա է:

ПЕРВЫЕ ШАГИ ФОРМИРОВАНИЯ КУЛЬТУРЫ СОВЕТСКОЙ АРМЕНИИ (декабрь 1920 г. – февраль 1921 г.)

МИРЗАХАНЯН Р. К.

Резюме

После советизации Армении были предприняты первые шаги по организации культурного строительства республики. С декабря 1920 года по февраль 1921 года Ревком и Наркомпрос приняли ряд декретов и указов по организации деятельности культурно-просветительских учреждений в Советской Армении. Проводимые мероприятия соответствовали политике в области культуры, осуществляемой в Советской России.

THE FIRST STEPS TOWARDS THE FORMATION OF SOVIET ARMENIAN CULTURE (December, 1920 – February, 1921)

R. MIRZAKHANYAN

Abstract

The first moves towards the establishment of the Soviet culture in Armenia occurred strictly after the sovietisation of Armenia. In the period between December 1920 and February 1921 the Revolutionary Committee and People's Commissar for Enlightenment, endorsed a series of decrees and orders targeted at the formation of a new cultural life in Soviet Armenia. The undertakings initiated derived from the cultural policy implemented in Soviet Russia, as well as, from the underlying Bolshevik theses of "popularization."